

ու հոգին, եւ զանոնք դիւրամէտ ընծայէին
ամէն տեսակ ախտից: Եւ եղով, որչափ
տխուր է անոնց պատկերը: Սկսելով վե-
րէն, չափազանց կեղտոտ դէմքերու շղթայ
մ'է Արշակունեաց հարստութիւնը, բաց ի
ցանցառ զարտուղութիւններէ: Զայս հաս-
կանալու համար՝ բաւական է թեթեւ ակ-
նարկ մը պատմութեան վրայ: Միանգա-
մայն այդ բարձր եւ առաջին օրինակները
բնականապէս աղիտաբեր ազդեցութիւն մը
պիտի գործէին աւետարանական կրօնից
մէջ դեռ խակ ազգի մ'ազատանւոյն ու
ժողովրդեան վրայ, Փաւստոսի անոցմէ
միոյն համար ըսածին պէս՝ թէ « զթա-
գաւորն իւրեանց օրինակ չարի առնէին,
եւ նովին օրինակաւ ձեւել սկսան եւ նոյն-
պէս գործել » (33): Ու չափով մ'իրա-
ւունք պիտի տային նոյն պատմչին վկա-
յելու՝ թէ առ հասարակ Հայք զքրիստո-
նէութիւնը « լոկ միայն իբրեւ զկրօնս իմն
մարդկութեան յանձինս իւրեանց՝ եւ ոչ
ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան, այլ
իբրեւ զմոլորութիւն իմն մարդկութեան ի
հարկէ » (անդ): Ուրիշ ի՞նչ կերպով կա-
րելի էր ընդունիլ կրօնք մը՝ որ անծանօթ
եւ անհանդուրժելի ժռմկալոյրիւն մը կը
պահանջէր իրենցմէ: Այս պատճառաւ ալ
Ս. Վրթանեսի օրով դեռ հազարաւոր գաղ-